

# **ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ**

**Սարգիս Մ. Մկրտչեան**

## **ԻՐԱՆԻ ԱԶԵՐԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ\***

**Բանալի բառեր** - ինքնութիւն, Իրան, ազերի, պարսկերէն, Ատրպատական, Ադրբեջան, մայրենի լեզու, պետութիւն, քաղաքական ժառանգութիւն, տնտեսութիւն, հաւատք, կրօն:

**Ուսումնասիրութեան նպատակն է բացայայտել Իրանի ազերիների ինքնութեան հիմնական տարրերը եւ, դրանք համեմատելով համաիրանական ինքնութեան հետ, յստակեցնել այն հարցը, թէ ինչ տեղ ու դեր են ունեցել Ատրպատականն ընդհանրապէս եւ այնտեղ բնակուող ազերիները մասնաւորապէս իրանական ինքնութեան համապատկերում:**

20-րդ դարի աւարտին Խորհրդային Միութեան փլուզումը եւ նրա առանձին հանրապետութիւնների ինքնորոշումը Իրանում եւս հրապարակ բերեցին ինքնութեանական հարցերը, որոնք յատկապէս արձագանք գտան Ատրպատականում, Քրդստանում, Խուզիստանում եւ Բելուջիստանում:

Ատրպատականում ոմանք առաջ քաշեցին հանրակրթական դպրոցներում մայրենի լեզուի ուսուցման եւ կրթամշակութային ազատութիւնների հարցը, որիչներն արժարժեցին Իրանի «բազմազգ» լինելու գաղափարը, ուստիէս դաշնային համակարգով կառավարուելու անհրաժեշտութեան հարցը, այլ խմբեր բարձրացրին Իրանից Ատրպատականի անջատման եւ «Հիւսիսային Ադրբեջանին» կամ Ադրբեջանի Հանրապետութեանը միացման հարցը եւ այլն:

Անկախ նրանից, թէ մինչեւ ուր էին առաջ գնում այս խմբերն իրենց առաջադրած նպատակների մէջ՝ կրթամշակութային խնդիրներից մինչեւ անկախութիւն, ակներեւ է, որ այդ բոլորն ունեին մի ընդհանուր բնութագրական գիծ: Բոլորն էլ տարբերութիւն էին դնում իրենց եւ Իրանի ժողովրդի միւս հատուածների միջեւ ու շեշտում էին միւսներից տարբեր ինքնութիւն ունենալը:

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 16.06.2020:

*Վէմ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) Գարի, թիվ 2 (70), ամիս-հունիս, 2020*

Այս յօդուածը մի համեստ փորձ է պատասխանելու այն հարցերին, թէ որ-  
քանով էին հիմնաւորուած նման փորձերը՝ հիմնուելով Իրանի ազերիների  
ինքնութեան՝ Իրանի ողջ ժողովրդի ինքնութիւնից ունեցած տարբերութիւն-  
ների ու ընդհանրութիւնների համեմատական քննութեան վրայ: Այն իրակա-  
նացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ ինչպէս հարցի պատ-  
մական հոլովոյթին, այնպէս էլ «ինքնութիւն» հասկացութեան բովանդակային  
կողմը կազմող հիմնական արժէքների համեմատական քննութեանը:

Ի՞նչ է ինքնութիւնը: Որո՞նք են ինքնութեան տարրերը: Ի՞նչ ենք հասկա-  
նում իրանական ինքնութիւն ասելով: Ինչո՞վ են Իրանի ազերիները նման եւ  
ինչո՞վ են տարբեր Իրանի ժողովրդի միւս հատուածից:

Ինքնութիւնն ընդգրկում է «ովքե՞ր ենք մենք» եւ «ինչպէ՞ս ենք յարաբեր-  
ւում ուրիշների հետ» առանցքային գաղափարները: «Հաւաքական ինքնու-  
թիւնը վերաբերում է ուրիշների հետ մեր նոյնականացմանը: Այն ենթադրում  
է «մենք»-ի գագաթնութիւն: «Ազգը» կարող է դիտուել որպէս մարդկանց գգա-  
ցողութիւն, մի տեսակ «մենք», որը կանգնում է օտար ազգերի դիմաց: Որպէս  
այդպիսին, դա մի տեսակ հաւաքական ինքնութիւն է: Մի ազգի մաս կազմել  
ենթադրում է միասնութեան եւ ընդհանուր շահերի հասկացութիւններ»<sup>1</sup>:  
«Ինքնութիւն» եզրոյթն այսպէս է բացատրուած «Ազգայնականութեան հան-  
րագիտարանում»:

Նոյն հանրագիտարանում «ազգային ինքնութիւն» եզրոյթի դիմաց գրուած  
է. «Ազգային ինքնութիւնը ժամանակակից երեւոյթ է, որը ենթադրում է ազգայ-  
նական շարժման եւ ազգային գիտակցութեան գոյութիւն: Ազգային ինքնութեան  
գոյութեան համար անհրաժեշտ է, որ ազգի անդամներն իրենց տեսնեն որպէս  
ձեւաւորուող մի ազգ եւ դրանով իսկ կիսեն [ընդհանուր] ինքնութիւնը: Ազգային  
ինքնութիւնը կարելի է սահմանել ընդհանուր պատմութեան, ընդհանուր տա-  
րածքի, ընդհանուր լեզուի կամ մշակոյթի, ընդհանուր կրօնի, ընդհանուր կամքի  
(Էռնեստ Ռենանի յայտնի «ամենօրեայ հանրա-  
քուէի») եւ ընդհանուր քաղա-  
քական ու իրաւական սկզբունքների հիման վրայ»<sup>2</sup>:

Էնթոնի Սմիթն իր «Ազգայնականութիւն. տեսութիւն, գաղափարախօ-  
սութիւն, պատմութիւն» աշխատութեան մէջ ազգը բնութագրում է վեց յատ-  
կանիշով՝ «պատշաճ անուն, ընդհանուր առասպելներ, ընդհանուր պատմու-  
թիւն, տարբերուող հասարակական մշակոյթ, բնակութիւն ընկալուած հայրե-  
նիքում, ընդհանուր օրէնքներ եւ սովորոյթներ»<sup>3</sup>:

Ընդհանուր առմամբ պետք է արձանագրել, որ հասարակական գիտութիւն-  
ներում ազգի տարրեր են համարուում միասնական լեզուն, միասնական պատ-  
մութիւնը, միասնական կրօնը, միասնական հայրենիքը, միասնական մշակոյթը,

1 Alexander J. Motyl, Encyclopedia of Nationalism, Vol. 2, Academic Press, Printed in the United States of America, 2001, p. 228.  
2 Նոյն տեղում, էջ 360:  
3 Anthony D. Smith, Nationalism: Theory, Ideology, History, Second Edition, Polity Press, UK, 2010, p. 14.

միասնական տնտեսությունը, միասնական զգացումները, միասնական պետությունը, հաւաքական գիտակցությունը եւ պատկանելիութեան զգացումը: Ազգային ինքնությունը ձեւաւորում է նաեւ «մեր»-ի եւ «օտար»-ի փոխարարութեան մէջ: Ուլքե՛ր ենք մենք, եւ ուլքե՛ր են նրանք, այս պարագային, օրինակ, Իրանն ու Թուրանը, աշամն<sup>4</sup> ու արաբը, իրանցին ու ոչ իրանցին<sup>5</sup>:

Ազգային ինքնութեան ձեւաւորման գործում նոյնականացումը տեղի է ունենում **ուղղահայեաց** (ժամանակային) եւ **հորիզոնական** (տարածական) իրար փոխրացնող մակարդակներում: «Ուղղահայեաց (ժամանակային) նոյնականությունը բնութագրում է պատմական յաջորդականությունը, այն, ինչ գոյություն է ունեցել եւ գործառել է «այնտեղ եւ այն ժամանակ», մինչդեռ հորիզոնական նոյնականությունը համաժամանակային է, այսինքն՝ այն է, ինչ գոյություն ունի եւ գործառում է «այստեղ եւ հիմա»»<sup>6</sup>:

Յստակ է, որ ինքնութեան որոշ տարրեր կայուն են, ինչպէս հայրենիքը, եւ որոշ տարրեր ժամանակի ընթացքում փոփոխութեան են ենթարկւում, ինչպէս օրէնքներն ու սովորությունները:

Կենտրոնանալով իրանական ինքնութեան վրայ՝ նշենք, որ Թեհրանի համալսարանի քաղաքագիտութեան դասախօս եւ հետազոտող Համիդ Ահմադին, իր «Իրանական ազգային ինքնությունը. հիմունքները, մարտահրաւերները եւ անհրաժեշտությունները» լայնածաւալ ուսումնասիրութեան մէջ բացատրելով «ինքնություն» հասկացությունը, այն բաժանում է երեք մասի՝ անձնական, հասարակական եւ ազգային, եւ իրանական ազգային ինքնությունն ու նրա հիմունքները վերլուծում է՝ դրանք բաժանելով վեց տարրերի՝ Իրանի պատմությունը, տարածքն ու աշխարհագրությունը, քաղաքական ժառանգությունը եւ պետություն հաստատությունը, Իրանի մշակութային ժառանգությունը, Իրանի հասարակությունն ու ժողովուրդը, Իրանի կրօնն ու բարոյական ժառանգությունը: Դրանից ելնելով՝ Ահմադին եզրակացնում է, որ Իրանի այսօրուայ հասարակությունը ներքին եւ արտաքին հիմնական մարտահրաւերների առջեւ է կանգնել, որոնք ինքնին հասարակական ու տնտեսական ներքին եւ շրջակայ փոփոխությունների հետեւանք են: Այդ մարտահրաւերներին դիմագրաւելու համար անհրաժեշտ է վերասահմանել իրանական ազգային ինքնությունը, որի հիմունքները՝ մշակոյթը, պատմությունը, կրօնն ու աշխարհագրությունը, կարելի է, սակայն երկու տարրի դերն ու նշանակությունը մոռացութեան են տրուել: Դրանք են՝ մի կողմից՝ Իրանի քաղաքական ժառանգությունը եւ պետություն հաստատությունը եւ միւս կողմից՝ Իրանի հասարակությունն ու ժողովուրդը<sup>7</sup>:

4 Ajam - ոչ արաբը, իրանցին:

5 Aniran - պարսկերէն բառ է, նշանակում է «ոչ իրանցի»:

6 Աւելի մանրամասն տես **Հարությունյան Է.**, Ազգային ինքնություն. «սերունդների աշխարհ» և «ժամանակակիցների աշխարհ», «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», Եր., 2019, N 2 (29), էջ 3-15:

7 **Stu**, حمید احمدی، هویت ملی ایرانی: بنیادها، چالش ها و بایسته ها، نامه پژوهش فرهنگی، تهران، تابستان ۱۳۸۲، سال هفتم، دوره جدید، شماره ۶

Վերոշարադրուածը նկատի ունենալով՝ փորձենք բացայայտել Իրանի ազերիաբնակ շրջանների եւ ազերիների տեղն ու դերը իրանական ինքնութեան համապատկերում եւ այդ ինքնութեան զարգացման հոլովոյթում:

Իրանի ազերիաբնակ շրջանները գտնուում են Իրանի հիւսիս-արեւմուտքում՝ պատմական Ատրպատականում, կազմել են Իրանի բուն տարածքի մի մասը, պատմութեան մէջ երբէք անջատ չեն եղել: Որոշ հետազոտողներ այն կարծիքին են, որ «Ատրպատական» բառը ծագել է Ատորպատ հրամանատարի անունից, ով եղել է այդ շրջանի իշխանը եւ մ.թ.ա. 330 թ. պայքարել է Ալեքսանդր Մակեդոնացու դէմ<sup>8</sup>:

Հանրայայտ «Դեիխոդա» բառարանում «Ազրբեջան» բառի դիմաց գրուած է. «...ասում են, որ այն վերցուել է Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից մէկի՝ Ատորպատոսի անունից», եւ շարունակութեան մէջ նշում է. «...ուրիշներն ասում են, որ այն «ազար» բառից է՝ «կրակ իմաստով», եւ «պատկան» կամ «պայկան» բառից՝ «պահապան» իմաստով<sup>9</sup>: Բառի ներկայիս արտասանութիւնը պայմանաւորուած է արաբերէնի ազդեցութեամբ այն դարերում, երբ Ատրպատականն ընկաւ արաբների տիրապետութեան տակ ու իսլամացաւ:

Պատմական առումով Ատրպատականը մարերի ժամանակներից ցայսօր եղել է Իրանի մի մասը: Ռուս մեծագոյն արեւելագետ Վ. Վ. Բարտոլդն այս կապակցութեամբ գրում է. «Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքներից շատ անելի առաջ Իրանական Ադրբեջանը Մարաստանի անքակտելի մասն էր: Գաւգամելայի ճակատամարտի ժամանակ Ատրպատոն ամբողջ Մարաստանի սատրապն էր... Մակեդոնացուց յետոյ Մարաստանի այն մասը, որ կառավարում էր Ատրոպատը, կոչուեց Փոքր Մարաստան, որը հետագայում անուանուեց նաեւ Մարական Ատրպատական<sup>10</sup>:

Յոյն աշխարհագրագետ Կլաւդիոս Պտղոմէոսի հանրայայտ «Աշխարհագրութիւն» (“Geographia”) հատորում իրական Ադրբեջանը, Մարաստանը կամ Ատրպատականը ցուցադրուած է Արաքսից հարաւ՝ Ուրմիոյ լճի շրջակայքում<sup>11</sup>:

(Համիդ Ահմադի, Իրանական ազգային ինքնութիւնը. հիմունքները, մարտահրաւերները եւ անհրաժեշտութիւնները, «Մշակութային հետազոտութեան նամակ հանդէս», Թեհրան, ամառ 1382, N 6):

8 احمد كسروی، آذری یا زبان باستان آذربایجان، سال ۱۳۹۰ (چاپ اول شمسی)، نشر هزار ۸۰-۸۱ ستاره، تهران، ۵۵ صفحه

(Ահմադ Քասրաի, Ազերի կամ Ադրբեջանի հնագոյն լեզու, 2011 (առաջին հրատարակութիւն՝ 1925 թ.), Թեհրան, «Էգար Քերման» հրատարակչութիւն, 55 էջ):

9 <http://www.vajehyab.com/dehkhoda/%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86> (մուտք՝ 28. 05. 2020).

10 عنایت الله رضا، اران از دوران باستان تا آغاز عهد مغول، تهران، ۱۳۸۰، چاپ اول، مرکز چاپ و انتشارات وزارت امور خارجه، مرکز اسناد و تاریخ دیپلماسی، صفحات ۸۱-۸۰

(Էնայաթոլլահ Ռեզա, Առանը հնագոյն ժամանակներից մինչեւ մոնղոլները, առաջին հրատարակութիւն, Թեհրան, Արտաքին գործոց նախարարութեան հրատարակչութեան կենտրոն, Դիւանագիտութեան պատմութեան եւ փաստաթղթերի կենտրոն, 1380, էջ 80-81).

11 Steven Galichian R., The Invention of History, Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination, Second, Revised and Expanded Edition, London/Yerevan, 2010:

Յայտնի աշխարհագրագետ Ստրաբոնը, ով ապրել է պարթևների ժամանակ, խօսելով Կովկասի Ալբանիայի սահմանների մասին, այն առանձնացնում է Ատրպատականից<sup>12</sup>:

9-րդ դարի իրանցի գիտնական Իբն է Խորդադբեն իր յայտնի «Զիթար ալ-Մասալիք վա ալ-Մամալիք» աշխատության մեջ նշում է Ատրպատականի հետեւեւեալ քաղաքների անունները՝ Մարադա, Միանջ (Միանէ), Արդեբիլ, Վարթան (-Վարզական), Թաւրիզ, Մարանդ, Խոյ, Մողան, Բարզանդ, Ջաբերուան, Ուրմիա եւ Սալմաստ<sup>13</sup>:

10-րդ դարի պատմագիր եւ աշխարհագրագետ Իբն-Ֆադիհը, ներկայացնելով Ատրպատականի սահմանները, նշում է, որ այն հիւսիսից հասնում է Արաքս գետին<sup>14</sup>, իսկ նոյն դարի մեկ այլ աշխարհագրագետ՝ Իբն-Հաուդալը<sup>15</sup>, Ատրպատականի քաղաքների մասին խօսելիս յիշատակում է Արդեբիլը, Թաւրիզը, Սալմաստը, Խոյը, Ուրմիան, Մարադան, Մարանդը եւ այլն<sup>16</sup>:

14-րդ դարի պարսիկ աշխարհագրագետ Համդոլլահ Մոթաուֆի Ղազուինին իր «Նեզհաթ օլ-Ղոլուք» աշխատության մեջ յիշատակում է Աղուանքի եւ Ատրպատականի քաղաքներն ու գիւղերը եւ վերջիններիս շարքում նշում Թաւրիզը, Արդեբիլը, Ահառը, Սալմաստը, Մարաբը եւ այլն<sup>17</sup>:

Վերոյիշեալ բոլոր քաղաքներն ու գիւղերը ինչպէս անցեալում, այսօր եւս գտնուում են Իրանի Արեւելեան ու Արեւմտեան Ատրպատականներ եւ Արդեբիլ նահանգներում:

Այսքանն անելի քան յստակ ապացուցում է, որ Իրանի ներկայիս ազերիաբնակ շրջանները, թէ՛ **աշխարհագրօրէն**, թէ՛ **պատմականօրէն** մշտապէս մաս կազմելով Իրանին եւ լինելով նրա անքակտելի մասը, համաիրանական ինքնութեան տարածաժամանակային նոյնականութեան կրողն են:

Իրանագետ, պրոֆ. Գառնիկ Ասատրեանը գրում է. «Իրանի բնական կոնստրուկտը երեք հազար տարուայ պատմութիւն ունի: Երեք հազար տարի է՝ ինչպէս ձեւաւորուել, այդպէս էլ մնացել է. Իրանի տարածքի ոչ մի հատուած անեքսիայի չի ենթարկուել. ոչ մի ժողովուրդ չի բերուել, կամ նրա էթնիկական տարածքը չի կցուել երկրին»<sup>18</sup>:

12 عنایت الله رضا، آذربایجان و اران (آلبانیای قفقاز)، تهران، ۱۳۶۰، چاپ اول، انتشارات ایران زمین، صفحه ۴۵

(**Էնայթոլլահ Ռեզա**, Ազրբեջան եւ Առան (Կովկասի Ալբանիա), Ա հրատարակութիւն, Թեհրան, «Իրան գամին» հրատարակչութիւն, 1360, էջ 45):

13 Steu Galichian R., նշվ. աշխ., էջ 17-34:

14 عنایت الله رضا، آذربایجان و اران (آلبانیای قفقاز)، صفحه ۴۶

(**Էնայթոլլահ Ռեզա**, Ազրբեջան եւ Առան (Կովկասի Ալբանիա), էջ 46):

15 **Իբն Հաուկալ**:

16 عنایت الله رضا، آذربایجان و اران (آلبانیای قفقاز)، صفحه ۴۸

(**Էնայթոլլահ Ռեզա**, Ազրբեջան եւ Առան (Կովկասի Ալբանիա), էջ 48):

17 Steu Galichian R., նշվ. աշխ., էջ 17-34:

18 <http://hetq.am/am/politics/garnik-asatrya/> (մուտք՝ 18.07.2009).

Մէկ այլ տեղ նա նշում է. «Իրանը հին երկիր է, որն ունի մօտ երեք հազար երկար տարիների անընդմէջ պետականութեան ււանդոյթ: Այն մի երկիր է, որը համարկում է ազգերի, որոնք միշտ եղել են պատմական Իրանի մի մասը եւ յստակօրէն ճանաչել են իրենց իրանական կապուածութիւնը (affiliation), ինչը վերաբերում է Իրանում ապրող բոլոր ազգերին՝ ներառելով նաեւ ոչ իրանական ծագում ունեցողներին: Իր ներկայիս սահմաններով Իրանն ամբողջութեամբ բնական կազմուածք է, նրա որեւէ մասը երբեք արհեստականօրէն իր տարածքին չի կցուել (ուժով): ...Դա պատճառ է եղել, որ, հակառակ ցեղային տարբերութիւնների եւ տարբեր խմբերում իւրայատուկ ււանդոյթների գոյութեան, նրանք ընդունեն ընդհանուր իրանական գաղափարի հայեցակարգը կամ մտայնութիւնը»<sup>19</sup>:

Վերոյիշեալ եւ բազմաթիւ այլ փաստերի հիմամբ պիտի եզրակացնել, որ տարածքի եւ աշխարհագրութեան՝ որպէս ինքնութեան տարրերից մէկի առումով Իրանի ազգերիաբնակ շրջանները պատմութեան խորքերից ցայսօր եղել ու մնում են Իրանի անբաժանելի մասը:

Նկատի ունենալով, որ ներկայումս պանթիւրքականները պատմական, աշխարհագրական, կրօնական, պետական ու քաղաքական ժառանգութեան եւ բազմաթիւ այլ առումներով չեն կարողանում հաւատք ներշնչող ապացոյցներ ներկայացնել Իրանի ազգերիների առանձին ինքնութեան վերաբերեալ, շեշտը դնում են նրանց լեզուի տարբերութեան վրայ: Այլ խօսքով, գլխաւորապէս հիմք ընդունելով լեզուի գործօնը, դրանով են հիմնաւորում իբր տարբեր ազգ լինելը, ուստի եւ անջատողական նկրտումներ ունենալու իրաւաչափութիւնը: Մինչդեռ բազմաթիւ հետազոտողներ անհերքելի ապացոյցներով փաստում են, որ **ազգերին** իրանական լեզուախմբի մի մասնիկն է, եւ թիւրքերէնը պարզապէս պարտադրուել է Իրանի ազգերիաբնակ շրջաններին: Ատրպատականի կամ, այլ խօսքով, Մեծ եւ Փոքր Մարաստանների բնակչութեան լեզուն, ինչպէս Սպահանի, Ռեյի եւ Համադանի բնակչութեանը, եղել է միջին պարսկերէնը: Այս մասին է վկայում իրանցի գիտնական Իբն-Մուսկաֆֆայը (932-1030): **Պարսկերէնը** իրանական տեղական տարբեր հարստութիւնների ժամանակ՝ Սամանիներ (819-999), Թահերիներ (821-873), Սաֆֆարիներ (861-1003), դարձաւ պաշտօնական գրագրութեան եւ գրականութեան լեզու, իսկ Իսլամական խալիֆայութեան ներսում՝ երկրորդ լեզու:

Իրանցի բազմաթիւ մասնագէտներ այն կարծիքին են, որ յատկապէս արաբական արշաւանքներից եւ թիւրքական ու մոնղոլական ցեղերի յարձակումներից յետոյ, երբ Իրանի կենտրոնական իշխանութիւնը տապալուեց, եւ Իրանի աշխարհագրական տարբեր տարածքներում քաղաքական տարաբնոյթ իշխանութիւններ առաջացան, իրանական ինքնութիւնը հնարաւոր եղաւ պահպանել պարսկերէնին

*Վէլ համահայկական հանդէս, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ամիլի-հունիս, 2020*

19 Asatryan G., Armenia and Security Issues in the South Caucasus, The Quarterly Journal, September 2002, Vol. 1, No. 3.

ապալինելով<sup>20</sup>: Այն երկրի տարբեր անկլիններում ապրող ազգաբնակչությանն իրար միաւորող գործոն էր: Յատկանշական է, որ Սեֆեւիների ժամանակ, թէև վերջիններս Արդեբիլից էին, եւ նրանց խօսակցական լեզուն Ատրպատականի թիւրքերէն էր, պետական պաշտօնական լեզուն պարսկերէն էր:

Իրանական ազգային ինքնութեան ամրապնդման գործում չպէտք է մոռանալ Ֆերդոսիի հեղինակած իրանական դիւցազներգութեան՝ «Շահնամէի» դերը (976-1010), որն այն ժամանակ, երբ Իրանում տիրապետում էին արաբները, պարսկերէնը կենդանի պահեց: ««Շահնամէն» մեր պատմութիւնը (դիւցազներգութիւնը) եւ լեզուն է... եւ հետագային մեր ազգայնութեան մշակութային պահպանը»<sup>21</sup>: Այն գործոն է, որը պահպանեց ոչ միայն պարսկերէնը, այլև պարսկերէնի միջոցով ազգի պատմական եւ քաղաքական յիշողութիւնը եւ փոխանցեց յաջորդ սերունդներին (ուղղահայեաց (ժամանակային) նոյնականութիւն): Ուստի գրական, կրօնական, դիցաբանական եւ պատմական գրականութեան մեծ մասը գրուել է պարսկերէնով:

Պարսկերէնը Իրանում իսլամի տարածումից առաջ տարածուած լեզուն էր եւ մեծ դեր ունէր արքունիքում, ու թէև իսլամի տարածումից յետոյ պարսկերէնը՝ որպէս գրագրութեան լեզու, իր տեղը զիջեց արաբերէնին, սակայն երկու դար յետոյ կրկին դարձաւ գրագրութեան լեզու՝ իրանական ինքնութեան վերականգնման գործում իրականացնելով մեծ առաքելութիւն: Ուստի կարելի է եզրակացնել, որ պարսկերէնը երբէք Իրանի էթնիկ խմբերին չի պարտադրուել, եւ Իրանում նրա տարածումը չի սկսվում 20-րդ դարից: Ահմադին որպէս վերոյիշեալ տեսակետի ապացոյց նշում է Իրանի քրդաբնակ շրջանների պատմութեան վերաբերեալ չորս աշխատութիւն, որոնք գրուել են պարսկերէնով, եւ «Սաֆինէյէ Թարիզ» գիրքը, որը գրուել է 14-րդ դարում, եւ որում արձանագրուած է Թարիզի գրադարանում առկայ աւելի քան 250 գրքի անուն, որոնց մեծ մասը պարսկերէն կամ արաբերէն է, եւ ոչ մէկը թիւրքերէն չէ<sup>22</sup>:

Չնայած որ Իրանը լեզուների եւ բարբառների բազմազանութեան տեսանկիւնից աշխարհի առաջին 10 երկրների շարքում է, եւ հիմնական լեզուներն են պարսկերէնը, ազարին, արաբերէնը, քրդերէնը, բելուջերէնը, թուրքմեներէնը եւ այլն, բայց մինչև դաջարական ժամանակաշրջանի գրեթէ վերջերը, աւելի ստոյգ՝ 20-րդ դարի 20-ական թուականները, տարբեր լեզուներով խօսող էթնիկ խմբերի մօտ Իրանից անջատուելու կամ անկախութեան ցանկութիւն չի նկատուում:

20 **Տե՛ս** شاهرخ مسکوب، هويت ایرانی و زبان فارسی، تهران، ۱۳۸۵، چاپ سوم، نشر و پژوهش فرزاد روز، صفحه ۱۰

(**Շահռոյս Մասքոպ**, Իրանական ինքնութիւնը եւ պարսկերէն լեզուն, երրորդ հրատարակութիւն, Թեհրան, «Ֆարզան ռուզ» հետազոտութիւն եւ հրատարակչութիւն, 1385, էջ 10):

21 Նոյն տեղում, էջ 19:

22 **Տե՛ս** حمید احمدی، بنیادهای هويت ملی ایرانی، تهران، تابستان ۱۳۸۸، پژوهشکده مطالعات فرهنگی و اجتماعی، صفحات ۳۹۸-۳۹۰

(**Համիդ Ահմադի**, Իրանական ազգային ինքնութեան հիմունքները, Թեհրան, Մշակութային եւ հասարակական ուսումնասիրութիւնների հաստատութիւն, 1388, էջ 390-398):

Դարեր շարունակ պետական պաշտօնական լեզուն եղել է պարսկերենը, որով էր իրականացում նաև դաջարական շրջանի պետական գրագրությունը:

Ինչ են մտածում այս կապակցությամբ իրենք՝ ազերի մտաւորականները: 1941 թ. Թեհրանում հիմնադրուեց համայնավարական «Թուդէհ» կուսակցությունը, որը յատկապէս իր գործունեութեան առաջին տասնամեակում լուրջ քաղաքական դերակատարութիւն ունեցաւ Իրանի քաղաքական կեանքում: «Թուդէհ» կուսակցութեան մտաւոր-բարոյական հիմնադիր Թաղի Առանին, ով թաւրիզեցի էր, այն կարծիքին էր, որ Ատրպատականը՝ «Իրանի օրրանը», «Վայրենի մոնղոլների հարձակման» հետեւանքով իր պարսկերէնը կորցրել է, եւ դա վտանգաւոր դրութիւն է ստեղծել, որովհետեւ որոշ ատրպատականցիներ այն սխալ պատկերացումն ունեն, որ թուրք են, եւ նոյնիսկ անջատողական հակումներ ունեն: Առանին շեշտում էր, որ այդ հարցը լուծելու համար պետութիւնը պէտք է դիմի բոլոր քայլերին՝ թուրքերէնը մէջտեղից հանելու եւ պարսկերէնը տարածելու համար<sup>23</sup>:

Թաւրիզեցի փիլիսոփայ եւ «Իրանշահր» տեսութեան առաջամարտիկներից դոկտ. Մէլէդ Ջաւադ Թաբաթաբային, ով «Իսլամական մեծ հանրագիտարանի» կենտրոնի փիլիսոփայութեան խմբի տնօրէնն է, «Մեիր նամէ» ամսաթերթին տուած հարցազրոյցում ասել է. «Ես ազերիախօս ընտանիքում եմ ծնուել, եւ բնական է, որ իմ մայրենի լեզուն ազերին լինի... Ատրպատականը Իրանի միւս նահանգների նման Իրանի անբաժանելի մասն է»<sup>24</sup>:

**Հաւատք եւ կրօն.** Էթնիկական կամ ազգային նոյնականութեան այս տարրի վերաբերեալ արձանագրենք հետեւեալը: Որոշ հետազոտողներ այն կարծիքին են, որ իրանական ինքնութիւնը 3-րդ դարում Մասսանեան հարստութեան ջանքերով է տեսք ստացել: Չրադաշտականութեան ընդունումը որպէս երկրի պաշտօնական կրօն, արարչագործութեան եւ պատմութեան վերաբերեալ էթնիկական ու կրօնական դիցաբանութեան պաշտօնականացումը եւ Իրանի աշխարհագրական սահմանումը այն տարրերն էին, որոնց հիմամբ ամրապնդուեց իրանական ինքնութիւնը: Այնուհետեւ Իրանի իսլամացումը պատճառ դարձաւ, որ գրադաշտականութիւնը փոխարինուի իսլամով: Վերջինս մեծապէս ազդեց իրանական մշակոյթի ու մտածողութեան վրայ եւ փոխադարձաբար ազդուեց իրանական մշակոյթից: Իրանը դաւանեց իսլամի շիա ուղղութիւնը, որին տուեց նաեւ ազգային երանգ:

15-րդ դարում Սեֆեւիները վերականգնեցին Իրանի ազգային կենտրոնական իշխանութիւնը: Սեֆեւիները (1501-1736), ովքեր Արդեբիլից էին, յաջողեցին տեղական մանր իշխանութիւններին համախմբել, Իրանի մասնատուած

23 Մէջբերումը՝ ըստ Abrahamian E., Iran Between Two Revolutions, Princeton University Press, Second Printing, 1983, էջ 388-415:

24 ماهنامه مهرنامه، تهران، تیر ۱۳۹۲ خورشیدی، سال چهارم، شماره ۲۹، صفحات ۱۸۷-۱۸۶ «Մեիր նամէ» ամսաթերթ, Թեհրան, 1392, չորրորդ տարի, N 29, էջ 186-187).



տարածքները միաւորել եւ ստեղծել կենտրոնական հօթր իշխանութիւն, ուստի մեծ դեր ունեցան իրանական ինքնութեան ամրապնդման գործում: Մեֆեւիների ժամանակ իսլամի շիա ուղղութիւնը պաշտօնականացուեց Իրանում: Այդ գործընթացը տեղի ունեցաւ 16-18-րդ դարերում: Մինչ այդ Իրանում շիաները փոքրամասնութիւն էին, իսկ սիւնիները՝ մեծամասնութիւն: Մեֆեւեան հարստութեան հիմնադիրների ձեռամբ սեֆեւիական շիիզմը դարձաւ պետական պաշտօնական կրօն, որը մեծ դերակատարութիւն ունեցաւ իրանական ինքնութեան վերականգնման, պահպանման եւ ամրապնդման գործում<sup>25</sup>:

Դրա պատճառներից մէկն այն էր, որ Մեֆեւիները ձգտում էին սիւնի Օսմանեան կայսրութեան դիմաց ստեղծելու պատուէշ, պահպանելու երկրի ազգաբնակչութեան միասնականութիւնը, իրանական ինքնութիւնն առանձնացնելու իսլամական սիւնի ուղղութիւնը դաւանողներից: Դա քայլ էր իրանական ինքնութեան պահպանման եւ ամրապնդման ուղղութեամբ:

Մեֆեւիները իրականացրին ոչ միայն Իրանի բաժան-բաժան եղած մասերի միաւորման եւ կենտրոնական իշխանութեան վերականգնման վիթխարի գործը, այլեւ նոյնիսկ կրօնական առումով որդեգրեցին այնպիսի քաղաքականութիւն, որ Իրանը, մնալով իսլամի ընդհանուր ծիրում, այնուամենայնիւ առանձնանայ միւս ուղղութիւններից, եւ ազգաբնակչութիւնն ունենայ իր ազգայինը: Ազերիների կրօնը ցայսօր պատկանում է համաիրանական շիա դաւանանքին (այլ խօսքով՝ ոչ միայն այն ժամանակ եւ այնտեղ, այլ նաեւ այստեղ եւ հիմա նոյնական է):

**Տնտեսական գործօնը** մեծ դեր է ունեցել եւ այսօր եւս ունի Իրանի ազերիաբնակ ու մնացած շրջանների փոխկապակցուածութեան գործում (հորիզոնական (տարածական) նոյնականութիւն): Որպէս օրինակ՝ գիւղատնտեսական արտադրութեան առումով Իրանի մասշտաբով Ատրպատականը միւս նահանգների համեմատ առաջատար դիրքերում է: Թաւրիզում են հաստատուած երկրի մեքենայաշինութեան եւ տրակտորաշինութեան ամենամեծ գործարանները: Ազերիները մեծ ազդեցութիւն ունեն Թեհրանի շուկայի եւ ընդհանուր առմամբ երկրի տնտեսութեան վրայ: Եւ այս գործօնը մշտապէս պատճառ է հանդիսացել, որ անջատողական նկրտումները ձախողութեան մատնուեն:

Հետազոտող Թուրաջ Աթաբակին այն կարծիքին է, որ Խիաբանիի<sup>26</sup> շարժման ձախողութիւններից մէկն այն էր, որ Իրանի ազերիաբնակ շրջանները տնտեսական առումով այնքան էին փոխկապակցուած Իրանի միւս շրջանների հետ, որ այդ, յատկապէս տնտեսական կապերը թուլացնելու ցանկացած փորձ

Բիրան Հոյտ մւլի و قومی در ایران، مقابله، از کتاب ایران: هویت، ملیت، قومیت، مجموعه مقالات، به کوشش حمید احمدی، تهران، موسسه تحقیقات و توسعه علوم انسانی، ۱۳۸۶، چاپ دوم، صفحات ۱۷۰-۱۳۳  
(Սինադ Աշրաֆ, Ազգային եւ էթնիկական ինքնութեան տագնապը Իրանում, «Իրան. ինքնութիւն, ազգութիւն, ցեղայնութիւն» յօդուածների ժողովածու, Երկրորդ իրատարակութիւն, Թեհրան, Հումանիտար գիտութիւնների ուսումնասիրման ու տարածման հաստատութիւն, 1386, էջ 133-170):  
26 Իրանի Սահմանադրական յեղափոխութեան գործիչներից:

ընկալելի դիմադրության էր հանդիպում: Նոյնը նա ասում է Փեշեւարիի<sup>27</sup> առումով, որը եւս նկատի չէր առել «...Ատրպատականի եւ Իրանի միւս մասերի տնտեսական, պատմական եւ մշակութային երկարատեւ կապուածութեան առկայութիւնը...»<sup>28</sup>:

Արտաքին ազդակներից բխող պանթիւրքականների քննադատութիւններից մէկն այն է, որ այն նահանգները, որտեղ ապրում են Իրանի էթնիկ խմբերը՝ ընդհանրապէս, իսկ ազերիաբնակ շրջանները՝ մասնաւորապէս, տնտեսական առումով յետամնաց են, եւ դա հետեւանքն է կենտրոնական իշխանութեան կողմից կիրառուող խտրական քաղաքականութեան: Մինչդեռ վերոշարադրուած օրինակները ցոյց են տալիս, որ այդ քննադատութիւնը որեւէ հիմք չունի:

Այս կապակցութեամբ Թեհրանի համալսարանի քաղաքագիտութեան դասախօս եւ հետազոտող Համիդ Ահմադին գրում է. «Չի կարելի ասել, որ Իրանի «էթնիկ» բոլոր շրջանները միեւնոյն ձեւով են տառապում դիտաւորեալ տնտեսական յետամնացութիւնից, եւ Իրանի ոչ էթնիկ կամ պարսկալեզու շրջանները տնտեսական զարգացումութեան առումով ակնառու ծաղկում են ունեցել... Իրանի որոշ էթնիկ շրջանների տնտեսական զարգացումութեան մակարդակը եւ տնտեսական զարգացման ցուցանիշները, ինչպէս, օրինակ, Ատրպատականի, աւելի բարձր են Իրանի պարսկալեզու շատ շրջանների ցուցանիշներից...»<sup>29</sup>:

Իրանի ազերիները լրջագոյն դեր են ունեցել Իրանի պետական համակարգում եւ կառավարման ու քաղաքական գործընթացներում, իսկ **պետութիւն հաստատութիւնն ու քաղաքական ժառանգութիւնը** իրանական ինքնութեան կարեւոր տարրերից մէկն է: Այն սկիզբ է առել հնագոյն ժամանակներից՝ սկսած Աքեմենեան հարստութիւնից, եւ հասել մինչեւ Իրանի Իսլամական Հանրապետութիւն, անշուշտ, որոշ ընդհատումներով: Այդ ամբողջ ընթացքում Իրանն ունեցել է պետական հաստատութիւններ: «Իրանշահր»-ի կամ արդարութեան եւ հզօրութեան վրայ հիմնուած պետութեան գաղափարը մշտապէս ուղեկցել է իրանական քաղաքական մտքին: Այն դրսեւորուել է թէ՛ դիցաբանական գրականութեան մէջ, թէ՛ պատմաքաղաքական եւ փիլիսոփայական:

Իրանի պետականութեան պատմութիւնը ամենահին ժամանակներից ցայսօր լի է դրուագներով, որոնցում Ատրպատականը եւ ազերիները լրջագոյն դերակատարութիւն են ունեցել: Միայն 20-րդ դարում նշենք հետեւեալ մեծ ի-

27 Իրանցի համայնավար, ով համարում է Ատրպատականի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան (նոյ. 1945 - դեկտ. 1946) հիմնադիրը:

28 تورج اتابکی، آذربایجان در ایران معاصر، ترجمه محمد کریم اشراق، انتشارات توس، چاپ اول، ۱۳۷۶، تهران، صفحه ۲۸۷

(**Թուրջ Աթաբակի**, Ադրբեջանը ժամանակակից Իրանում, Թեհրան, «Թուս» հրատարակչութիւն, 1376, 287 էջ):

29 حمید احمدی ، بنیادهای هویت ملی ایرانی، صفحه ۳۴۶ (Համիդ Ահմադի, Իրանական ազգային ինքնութեան հիմունքները, էջ 346):

րադարձությունները՝ Իրանի Սահմանադրական շարժումը (1905-1911), Իրանի Իսլամական յեղափոխությունը 1979 թ., Իրան-Իրաք 8-ամեայ պատերազմը (1980-1988):

Քաղաքական եւ պետական ժառանգության տեսանկյունից պետք է նշել, որ Թաւրիզը երկար ժամանակ եղել է Իրանի մայրաքաղաքը: Երբ Աղա Մոհամմադ խանը, ով դաջար թիւրքական ցեղախմբից էր, հիմնադրեց Ղաջարական հարստությունը (1796-1925), Իրանի մայրաքաղաքը տեղափոխեց Թեհրան: Նոյնիսկ այդ ժամանակաշրջանում Թաւրիզը պահեց իր քաղաքական բարձր նշանակությունը՝ մնալով որպէս թագաժառանգի նստավայր:

Մինչեւ դաջարական շրջանի աւարտը Իրանի պետական համակարգում ազերիները զբաղեցնում էին բարձր դիրքեր: Բանակի հրամանատարությունը նրանց ձեռքում էր:

Հասարակագէտ եւ հետազոտող Ահմադ Աշրաֆն այն կարծիքին է, որ Իրանում նորագոյն բանակի կազմավորմամբ ազերիներն իրենց առաջատար դիրքերը հրամանատարական կազմում կորցրին եւ յայտնուեցին պարսիկների հետ նոյն հարթության վրայ: Դա պատճառ դարձաւ, որ նրանց մօտ առաջանայ իրենց նկատմամբ պարսիկների գերակայութեան զգացում, որը տեղին չէր: Դա յանգեցրեց ինքնութեան տագնապի, որը խորացաւ Օսմանեան կայսրութիւնում պանթիւրքիզմի եւ Ռուսաստանի տիրապետութեան տակ գտնուող՝ Արաքս գետից հիւսիս ընկած տարածքներում ազգայնական միտումների ազդեցութեամբ: Դրան մեծապէս նպաստեց նաեւ 20-րդ դարի վերջին Խորհրդային Միութեան փլուզմամբ Ադրբեջանի Հանրապետութեան անկախացումը<sup>30</sup>:

Բազմաթիւ ազերիներ պայքարել են Իրանի ազատութեան ու անկախութեան համար եւ կամ հասել են երկրի ղեկավարման բարձր դիրքերի, որոնցից որպէս օրինակ նշենք մի քանիսին՝ Իրանի Սահմանադրական շարժման ղեկավարներից Սաթթար խանը եւ Բադեր խանը, Իրանի Իսլամական Հանրապետութեան առաջին վարչապետ Մեհդի Բազարգանը, Իրան-Իրաք պատերազմի ընթացքում Իրանի վարչապետ Միր Հոսէյն Մուսաւիին, Իրանի նաւթի ազգայնացման շարժման ղեկավար եւ վարչապետ Մոհամմադ Մոսադեղը եւ վերջապէս՝ երկրի ներկայիս հոգեւոր առաջնորդ Սէյէդ Ալի Խամենէին:

Այս ամբողջի լոյսի տակ հարց է առաջանում՝ եթէ ազերիների ինքնությունը տարբերուում է իրանական ինքնությունից, եւ նրանք օտար ազգ են, ապա ինչո՞ւ են պայքարում Իրանի ազատութեան, անկախութեան եւ հողային ամբողջականութեան համար: Ինչպէ՞ս կարելի է ասել, որ նրանք խտրականութեան զոհ են դառնում:

30 احمد اشرف، بحران هویت ملی و قومی در ایران، مقاله، از کتاب ایران: هویت، ملیت، 30 Sten قومیت، مجموعه مقالات، به كوشش حمید احمدی، تهران، موسسه تحقیقات و توسعه علوم انسانی، ۱۳۸۳، چاپ دوم، صفحات ۱۷۰-۱۳۳ (Սհմադ Աշրաֆ, Աշվ. աշխ., էջ 133-170):

Իրանի ազերիների պատմությունն ու ինքնությունը հնարաւոր չէ պատկերացնել Իրանի մնացած հատուածի պատմությունից ու ինքնությունից առանձին, այն պարզ պատճառով, որ դրանք հնարաւոր չէ իրարից անջատել:

Ինչպէս ուղղահայեաց (ժամանակային), այնպէս էլ հորիզոնական (համաժամանակեայ) նոյնականութեան բաղադրիչներով՝ պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօն եւ հաւատք, պաշտօնական եւ գրաւոր լեզու, քաղաքական ժառանգութիւն, տնտեսութիւն, պետական կառավարման ոլորտ, քաղաղաքական գործընթացներում ներգրաւուածութիւն, Իրանի ազերիները կրում են իրանական ինքնութեան բոլոր տարրերը:

### Եզրակացութիւններ

Ազերիներն իրանական էթնիկ խումբ են, որոնց ինքնությունը հնարաւոր չէ տարանջատել իրանական ընդհանուր ինքնությունից: Թիւրքական լեզուաբանութիւն պատկանող Ատրպատականի թուրքերէնով խօսելը, որը նրանց պարտադրուել է թիւրքական ու մոնղոլական ցեղերի ներխուժման հետեւանքով, բաւարար պայման չէ հաստատելու, որ նրանք օտար ազգ են:

Ազերիները կրում են իրանական ինքնութեան բոլոր տարրերը՝ աշխարհագրական սահմաններ, պատմութիւն, կրօն եւ դաւանանք (իսլամի շիա ուղղութիւն), Իրանի պետական եւ քաղաքական համակարգում մշտական ներկայութիւն եւ առանցքային դերակատարութիւն, միաձուլում Իրանի տնտեսական համակարգում, մշակութային ժառանգութիւն եւ այլն, որոնք վկայութիւնն են այն բանի, որ ազերիներն իրանական արմատներ ունեն եւ իրանցիներ են:

Ամերիկացի վերլուծաբան, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչութեան (CIA) բարձրաստիճան պաշտօնեաներից Գրահամ Ֆուլերն այս կապակցութեամբ գրում է. «...Թէեւ Իրանի ազերիները գիտակցում են այն իրանականությունը, որ իրենց ընտանիքներում թիւրքերէն են խօսում, եւ դա արժեւորում են, բայց վստահ չեն, որ ցեղային առումով իրապէս թուրք են եւ կամ իրանցիներ, որ թուրքերի հարձակման հետեւանքով պատմական պայմանների բերումով թիւրքերէն են խօսում: Շիա ուղղութիւնը նրանց առանձնացնում է օսմանցի սիւննի թուրքերից, եւ մինչև հիմա «թուրք» եզրոյթը, նոյնիսկ Իրանի ազերիների շրջանում, մշակութային նուաստացուցիչ ենթադրեալ իմաստ է պարունակում, որը չունի պարսկական մշակոյթի կրթուածութեան իմաստը»<sup>31</sup>:

31 Գրահամ ֆուլեր, قبله عالم. ژئوپولیتیک ایران، چاپ دوم، تهران، نشر مرکز، انتشارات وزارت امور خارجه، ۱۳۷۷، صفحات ۲۰۱-۲۰۰

(Գրահամ Ֆուլեր, Տիեզերքի կենտրոնը: Իրանի աշխարհաքաղաքականությունը, երկրորդ հրատարակություն, Թեհրան, «Մարքազ» հրատարակչություն, Իրանի արտգործ նախարարություն, 1377, էջ 200-201).

վէլ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) Գրարի. թիվ 2 (70), ամսիկ-հունիս, 2020

Մրանով հանդերձ՝ ընդգծենք, որ 20-րդ դարում առնուազն երկու անգամ անջատողական լուրջ շարժումներ են առաջացել Իրանի ազերիաբնակ շրջաններում: Թեև դրանք հրահրուել են դրսից եւ եղել են արտաքին ուժերի ազդեցութեան հետեւանք, որոնց պատճառով էլ ձախողուել են, բայց եւ այնպէս, ներկայումս եւս նմանատիպ վտանգ գոյութիւն ունի: Ներկա հրապարակման մէջ բերուած փաստերը հերթական անգամ վկայում են, որ նման փորձերը Իրանի հանդէպ կիրառուող լայնածաւալ քարոզչական գրոհների արդյունք են, որոնց ընթացքում հիմնաւորապէս խեղաթիւրուում են նաեւ ինքնութենական հարցերը:

**Սարգիս Մ. Մկրտչեան** - գիտական հետաքրքրութիւններն ընդգրկում են վերջին մէկ դարի ընթացքում պանթիւրքիզմի՝ Իրան ներթափանցելու փորձերի եւ Իրանի Ատրպատականում պանթիւրքական կազմակերպութիւնների գործունէութեան պատմութիւնը: Այս թեմայով հրատարակել է մէկ աշխատութիւն:

Էլեկտրոնային հասցէ - [sarkis.mkrтчian@gmail.com](mailto:sarkis.mkrтчian@gmail.com)

Summary

## ON THE ISSUE OF THE IDENTITY OF IRAN'S AZERIS

Sargis M. Mkrтчian

**Key words** - identity, Iran, Azeri, Persian, Atrpatakan, Azerbaijan, mother tongue, state, political heritage, economy, faith, religion.

At the end of the 20th century, the collapse of the Soviet Union and the self-determination of its separate republics also brought to the fore in Iran the issues of identity, which had certain manifestations especially in the Azeri-populated regions of Iran.

Organizations and figures appeared in the public, presenting various demands, from the teaching of the mother tongue in secondary schools and educational and

cultural freedoms to the idea of separating Atrpatakan from Iran and joining “Northern Azerbaijan” or the Republic of Azerbaijan.

What is identity? What are the elements of identity? Is the identity of the Azeris of Iran different from the identity of the Iranian people? What do we understand under Iranian identity? What are the Azeris of Iran like and how are they different from the rest of the Iranian people? Recording that elements of national identity are considered to be a united history, united religion, united homeland, united culture, united economy, united language, common feelings, united state and political heritage, collective consciousness, sense of belonging, we conclude that the Azeris are an Iranian ethnic group whose identity cannot be separated from the common Iranian identity. Speaking Turkish of Atrpatakan, which belongs to the Turkish language family, imposed on them as a result of the invasion and coercion of the Mongol-Turkic tribes, is not enough to prove that they are a foreign nation. Since the Azeris of Iran bear all the elements of Iranian identity – geographical borders, history, religion and confession (Shiite religion of Islam), their constant presence in the state-political system of Iran, their integration into the Iranian economic system, bearing the cultural heritage, etc., all are evidence of that the Azeris have Iranian roots and are Iranians.

Резюме

## К ВОПРОСУ ИДЕНТИЧНОСТИ ИРАНСКИХ АЗЕРИ

Саргис М. Мкртчян

**Ключевые слова** – идентичность, Иран, азеры, персидский язык, Атрпатакан, Азербайджан, родной язык, государство, политическое наследие, экономика, вера, религия.

Развал Советского Союза в конце 20-го века и самоопределение его отдельных республик выдвинули вопросы идентичности также в Иране, что особенно четко проявилось в тех частях Ирана, которые населены азерами.

На арену вышли организации и деятели, представившие различные требования, начиная от свободы обучения родному языку в общеобразовательных школах и культурно-образовательных свобод, до идеи отделения Атрпатакана от Ирана и присоединения к «Северному Азербайджану», или Азербайджанской Республике.

Что такое идентичность? Каковы его элементы? Отлична ли идентичность иранских азеры от идентичности иранского народа? Что мы понимаем под

иранской идентичностью? Чем похожи и чем отличаются иранские азеги от остальной части иранского народа?

Констатируя, что элементами национальной идентичности считаются единая история, единая религия, единая родина, единая культура, единая экономика, единый язык, единые чувства, единое государство и политическое наследие, объединенное сознание и чувство принадлежности, приходим к заключению, что азеги – иранская этническая группа, идентичность которой невозможно отделить от общей иранской идентичности. То, что они говорят на принадлежащем тюркской семье языков турецком языке Атрпатакана, было следствием вторжения монголо-тюркских племен и принуждения с их стороны и не является достаточным условием, чтобы утверждать, что это чужая нация для Ирана. Иранские азеги несут в себе все элементы иранской идентичности: географические границы, историю, веру и конфессию (шиитское направление ислама), постоянное присутствие в государственной и политической системе Ирана, слияние с экономической системой Ирана и т. д. Все это свидетельствует, что азеги имеют иранские корни и являются иранцами.

## REFERENCES

1. “Mahnameye Mehr”, 1392, Shomareye 28 (**In Persian**).
2. **Ahmad Ashraf**, Bohran e Hovviyyat e Melli Va Ghomi Dar Iran, Maghale, Az Ketab e Iran: Hovviyyat, Melliyat, Ghomiyat, Majmooye Maghalat, Be Kooshesh e Hamid Ahmadi, Chap e Dovvom, Tehran, Moasesye Tahghighat Va Toseeye Oloom e Ensani, 1383 (**In Persian**).
3. **Ahmad Kasravi**, Azeri Ya Zaban e Bastan e Azerbaijan, Tehran, Nashr e Hezar Kerman, Sal 1390 (Chap e Avval 1304 Shamsi) (**In Persian**).
4. **Enayatollah Reza**, Aran Az Doran e Bastan Ta Aghaz e Ahd e Moghol, Chap e Avval, Tehran, Markaz e Chap Va Entesharat e Vezerat e Omur e Khareje, Markaz e Asnad Va Tarikh e Diplomasy, 1380 (**In Persian**).
5. **Enayatollah Reza**, Azerbaijan Va Aran (Albaniyaye Ghafghaz), Tehran, Entesharat e Iran Zamin, 1360 (**In Persian**).
6. **Graham E. Fuller**, Ghebleye Alam, Geopolitik e Iran, Chap e Dovvom, Tehran, Nashr e Markaz, Entesharat e Vezerat e Omur e Khareje, 1377 (**In Persian**).
7. **Hamid Ahmadi**, Bonyadhaye Hovviyyat e Melliye Irani, Tehran, Pazhooheshkadeye Motaleat e Farhangi Va Ejtemayi, 1388 (**In Persian**).
8. **Hamid Ahmadi**, Hovviyyat e Melliye Irani: Bonyadha, Chaleshha va Bayesteha, Nameye Pazhoohesh e Farhangi, Sal e Haftom, Doreye Jadid, Shomateye 6, Tabestan 1382 (**In Persian**).
9. **Shahrokh e Maskoob**, Hovviyyat e Irani Va Zaban e Pharsi, Tehran, Nashr o Pazhoohesh e Farzan e Rooz, 1385 (**In Persian**).
10. **Touraj Atabaki**, Azerbaijan Dar Iran e Moaser, Tarjomeye Mohammad Karim e Eshragh, Chap e Avval, Tehran, Entesharat e Tous, 1376 (**In Persian**).